



հայկական պողպատածուլական ձեռնարկություն „ԱՍԿԵ գրուպ” ԲԲԸ  
армянское сталелитейное предприятие „АСКЕ груп” ОАО  
armenian steel casting enterprise „ASCE group” OJSC

49/01

21 մայիս 2021թ.

**Էական փաստեր և տեղեկություններ ներառող փաստաթուղթ**

Ղեկավարվելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ Օրենքի 127 հոդվածի պահանջներով, կից ներկայացվում են «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲ Ընկերության, որպես հաշվետու թողարկողի, էական փաստերը և տեղեկությունները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ վկայակոչված էական փաստերը և տեղեկությունները հրապարակվել են ընկերության պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ [www.asce.am](http://www.asce.am):

Առդիր՝ 4 թերթ:

Տնօրեն՝ **Ի. Անտոնյան**



«20» մայիսի 2021թ.

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՈՐՈՇՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Ամսաթիվ՝ 20. 05. 2021թ.  
Հասցե՝ ք. Չարենցավան, Երևանյան 2  
Փաստաթղթի համարը՝ 3

- ՕՐԱԿԱՐԳ – 1. «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ 2020 թ-ի տարեկան արդյունքների քննարկում  
և հաստատում, տարեկան ընդհանուր ժողովի հրավիրում  
2. «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ 2021թ տարեկան ֆինանսական  
հաշվետվությունների անկախ աուդիտի ընտրություն

Ընկերության Տնօրենի ծանուցմանը հաջորդիվ Ընկերության խորհրդի հերթական  
նիստը գումարվեց առկա, Խորհրդի հերթյալ անդամների մասնակցությամբ՝  
Խաչատուր Անտոնյան՝ խորհրդի անդամ  
Վազգեն Նիկոլյան՝ խորհրդի անդամ  
Դավիթ Յավրույան՝ խորհրդի անդամ

Միխայիլ Հարությունյան՝ խորհրդի նախագահ  
Նազիկ Ավագյան՝ խորհրդի քարտուղար

Օրակարգի առաջին հարցով ելույթ ունեցավ Ընկերության տնօրենների խորհրդի անդամ և  
տնօրեն Խ. Անտոնյանը: Նա՝ ընկերության գլխավոր հաշվապահ Կ. Մամիկոնյանի գնությամբ,  
նիստի մասնակիցներին ներկայացրեց ընկերության տարեկան արդյունքները և նշեց, որ  
ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների վերաբերյալ առկա է անկախ  
աուդիտ հանդիսացող «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ և ընկերության վերստուգող  
հանձնաժողովի եզրակացությունները:

Առաջարկվեց բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանը  
ներկայացնել տնօրենների խորհրդի անդամների հետևյալ թեկնածությունները՝

1. Միխայիլ Հարությունյան
2. Խաչատուր Անտոնյան
3. Վազգեն Նիկոլյան
4. Դավիթ Յավրույան

Նիստի մասնակիցներին հիշեցվեց, որ Միխայիլ Հարությունյանը, լինելով բաժնետեր,  
ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա  
դրությամբ ուղղակիորեն տիրապետում է Ընկերության տեղաբաշխված քվեարկող  
բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, ուստի «Բաժնետիրական ընկերությունների»  
մասին ՀՀ օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն նա Ընկերության տնօրենների  
խորհրդի կազմում ընդգրկվում է առանց ընտրության, այդ իսկ պատճառով նրա անունը  
բացակայում է քվեաթերթիկում:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ նիստը որոշեց՝

1) Ի գիտություն ընդունել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ 2020թ.-ի տարեկան արդյունքները և  
նախնականապես հաստատել 2020թ.-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

2) Սույն թվականի հունիսի 15 -ին ժամը 16<sup>00</sup>-ին ընկերության վարչական շենքում

( հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Երևանյան 2) հրավիրել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հետևյալ օրակարգով՝

1. «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ տարեկան ֆինանսական հաշվետվության և հաշվեկշռի հաստատում, շահույթի և վնասների հաստատում, շահաբաժինների բաշխման հաստատում, աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը
2. «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատում և անդամների ընտրություն
3. «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ 2021թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտի ընտրություն և հաստատում

3) Ընկերության տարեկան ընդհանուր ժողովին մասնակցող անձանց ցուցակը կազմել առ 21.05.2021թ.-ի դրությամբ, համաձայն ընկերության ռեստրի

4) Առաջարկել ընդհանուր ժողովի հաստատմանը 4 հոգուց բաղկացած տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներին հետևյալ կազմով՝

1. Միխայիլ Հարությունյան
2. Խաչատուր Անտոնյան
3. Վազգեն Նիկոլյան
4. Դավիթ Յավրույան

5) Առաջարկել ընդհանուր ժողովի հաստատմանը հաշվիչ հանձնաժողովի անդամության հետևյալ թեկնածուներին՝

1. Լաուրա Բառբառյան
2. Մարգո Ավետիսյան
3. Լյուդմիլա Ալեքսանյան

6) [azdarar.am](http://azdarar.am) և [www.asce.am](http://www.asce.am) կայքում տպագրել տարեկան ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ ծանուցման հայտարարությունը

7) Հաստատել տարեկան ընդհանուր ժողովի քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը

8) Հաստատել տարեկան ընդհանուր ժողովին ներկայացվող նյութերը և տեղեկությունները հետևյալ ցանկով.

- ա) Ընկերության 2020թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները
- բ) Ընկերության տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունները
- գ) Քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը
- դ) Սույն տնօրենների խորհրդի նիստի արձանագրությունը

9) Հանձնարարել ընկերության տնօրինությանը, կանոնադրության համաձայն, պատրաստել տարեկան ընդհանուր ժողովի անցկացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը

( Չայների բաշխվածություն՝ կողմ – 4, դեմ և ձեռնպահ չկա )

Օրակարգի երկրորդ հարցով ելույթ ունեցավ Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահ Մ. Հարությունյանը: Նա առաջարկեց «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԲԸ 2021թ տարեկան ֆինանսական հաշվետվությունների համար անկախ աուդիտ ընտրել:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ նիստը որոշեց՝

Բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել «ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ՔԲԸ 2021թ տարեկան ֆինանսական հաշվետվությունների համար, որպես անկախ աուդիտ, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ թեկնածությունը:

(Ձայների բաշխվածություն՝ կողմ – 4, դեմ և ձեռնպահ չկա )

Խորհրդի անդամ՝ Խաչատուր Անտոնյան \_\_\_\_\_

Խորհրդի անդամ՝ Վազգեն Նիկոլյան \_\_\_\_\_

Խորհրդի անդամ՝ Դավիթ Յավրույան \_\_\_\_\_

Խորհրդի նախագահ՝ Միխայիլ Հարությունյան \_\_\_\_\_

Խորհրդի քարտուղար՝ Նազիկ Ավագյան \_\_\_\_\_



*Ծանուցում*

**2021թ հունիսի 15-ի ժամը 16<sup>00</sup>-ին գումարվող ԱՍԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ  
Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի մասին**

ԱՍԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ Տնօրենների խորհրդի 20.05.2021թ. նիստում որոշում է ընդունվել 2021թ-ի հունիսի 15-ին, ժամը 16<sup>00</sup>-ին գումարել ԱՍԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ: Ժողովն անցկացվելու է Ընկերության վարչական շենքում՝ ք. Չարենցավան, Երևանյան 2 հասցեում:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվելու է 2021թ մայիսի 21-ի դրությամբ:

Ընկերության բաժնետերերի 2021թ հունիսի 15-ին ժամը 16<sup>00</sup>-ին գումարվող ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

1. ԱՍԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ տարեկան ֆինանսական հաշվետվության և հաշվեկշռի հաստատում, շահույթի և վնասների, շահաբաժինների բաշխման հաստատում, աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:
2. ԱՍԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ Տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատում և անդամների ընտրություն:
3. ԱՍԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ 2021թ տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտի ընտրություն և հաստատում:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին (այդ թվում քվեաթերթիկներին) կարելի է ծանոթանալ և ձեռք բերել աշխատանքային օրերին՝ 2021թ մայիսի 25-ից մինչև հունիսի 14-ը ներառյալ Ընկերության կայքերի բաժնում ժամը 10<sup>00</sup>-ից մինչև 15<sup>00</sup>:

Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովին մասնակցելու համար բաժնետերը (անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով) կամ նրա կողմից լիազորված անձը (լիազորությունը հաստատված Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի և Բաժնետիրական ընկերությունների մասին Հայաստանի հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան) պետք է 2021թ հունիսի 15-ին ժամը 11<sup>00</sup>-ից մինչև 15<sup>45</sup>-ը գրանցվի ժողովի մասնակիցների գրանցամատյանում: Գրանցումից անմիջապես հետո կտրամադրվեն ժողովի օրակարգում ներառված հարցերի քվեաթերթիկները:

**ԱՍԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ Տնօրենների խորհուրդ**